ՀՀ Արարատի մարզի Շաղափի մարմարացված կրաքարերի երևակման <<Երանի >> տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Արձանագրություն

14.04.2015թ. գ. Շաղափ

2015թ-ի ապրիլի 14-ին ժամը 12:00 Շաղափ համայնքում տեղի ունեցավ << Երանի-Մ>> ՍՊԸ–ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Շաղափի մարմարացված կրաքարերի երևակման <<Երանի>> տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ:

Մասնակցում էին՝ << Երանի-Մ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Օսիպյանը, <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Զ. Զուռնաչյանը, ՀՀ Արարատի մարզի Շաղափ գյուղապետարանի աշխ. քարտուղար Գ. Հուսիկյան, համայնքի բնակիչներ և ավագանու անդամներ:

Ելույթ ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Զ. Զուռնաչյանը՝ համառոտ ներկայացրեց երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման հայտը, պատասխանեց մասնակիցների հետաքրքրող հարցերին: Նշեց, որ տարածքում երկաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են հորատ անցքերի հորատմամբ: Այդ աշխատանքների իրականացման ընդացքում շրջակա միջավայրը ախտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ: Օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհները՝ վերջիններս բարեկարգելով:

Շաղափի գյուղապետարանի աշխ. քարտուղարը փաստեց, որ ուսումնասիրվող տարածում ծառաթփուտային բուսականությունը բացակայում է:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Զ. Զուռնաչյանը հարց բարձրացրեց, տարածքով անցնում են բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, ջրատարներ, գազատարներ, մոտակայքում կան գերեզմանոցներ, պատմամշակութային կոթողներ և այլն:

Մ. Դավթյանը պատասխանեց, որ տարածքում բացակայում են վերոնշյալ ինժեներական ենթակառուցվածքները, իսկ գերեզմանոցը և պատմամշակութային կոթողը գտնվում են մոտ 2 կմ հեռավորության վրա:

Մասնակիցները տվեցին իրենց համաձայնությունը << Երանի-Մ>> ՍՊԸ-ի կողմից Շաղափ մարմարացված կրաքարերի երևակման երկրաբանահետախուզական աշխատանքների կատարմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հավանություն տալ ՀՀ Արարատի մարզի Շաղափի մարմարացված կրաքարերի երևակման <<Երանի >> տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման հայտին և նրանում ներառված բնապահպանական միջոցառումների ծրագրին:

Քննարկումների պատասխանատու՝ Գ. Հուսիկյան/գյուղապետարանի աշխ. քարտուղար/

Արձանագրող՝ Հ. Սարգսյան/օպերատ/

Ձեռնարկող՝ <<Երանի-Մ>> ՍՊԸ-ի տնօրեն Ա. Օսիպյան

Վարող՝ Մ. Դավթյան/մշակույթի տան տնօրեն/

ՀՀ Արարատի մարզի Շաղափի մարմարացված կրաքարերի երևակման <<Երանի>> տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների

մասնակիցների ցանկ

Զ. Զուռնաչյան /<<ՇՐՋ. ՄԻՋ. ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ մասնագետ

Ա. Օսիպյան /<<Երանի_Մ>> ՍՊԸ տնօրեն/

Գ. Հուսիկյան /գյուղապետարանի աշխ. քարտուղար/

Հ. Սարգսյան /օպերատոր/

Մ. Դավթյան / Մշակույթի տան տնօրեն /

Մ. Պատուրյան /բնակիչ/

Հ. Սեդրակյան/բնակիչ/

Ե. Ղազարյան / գրադրանավարուհի/